

ՊԱՐՄԻԿ ԱՆՎԱՆԻ ԳՐՈՂԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

XX դարի պարսկական ռեալիստական գրականության հիմնադիրներից մեկն է նշանավոր արձակագիր Նովելիստ Մոհամմադ Ալի Ջամալզադեն։ Նրա ստեղծագործությունները եղել են Սովետական Միության արևելագետ բանասերների ուսումնասիրության առարկան, իսկ նորավեպերն ու պատմվածքները թարգմանվել են ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին երիտասարդ Ջամալզադեն գտնվում էր Բեռլինում։ Մի առիթով նա գործուղման է մեկնում Բաղդադ, որտեղ հասնելու համար պետք է անցնել Թուրքիայի վրայով։ Այդ դժվարին ճանապարհորդության ընթացքում նա ականատես է լինում օսմանյան կառավարության ժանդարմների կողմից հայերի նկատմամբ կատարած գազանաբարո խոշտանգումների ու սպանությունների շատ տեսարանների, որոնց մասին նա 1971 թ. Ժնևից իր գրությունները ուղարկում է Թեհրանում լույս տեսնող «Հուր» ամսագրին, որտեղ և նրանք տպագրվում են (1971 թ., № 2)։

Բնագրից կատարած մեր թարգմանության մեջ զխափորապես ներկայացնում ենք այն հատվածները, որոնք վերաբերում են հայերի կոտորածներին։

Հ. Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Այն, ինչ ստորև պատմվում է, իրողություններ են, որոնց ես անձամբ ներկա եմ և ականատես եմ եղել։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին տողերիս դրողը դեռևս երիտասարդ էր. հանգուցյալ Սեիդ-Հասան Թաղիզադեի գլխավորությամբ Բեռլինում գործող Իրանի ազգայնական կոմիտեի հանձնարարությամբ այդտեղից ես պետք է մեկնեի Բաղդադ։ Իմ ճանապարհը անցնելու էր Թուրքիայի վրայով։ Այդ ժամանակ օսմանյան տերության կառավարությունը երիտթուրքերի ձեռքին էր, և Թուրքիան (կամ օսմանյան պետությունը), Գերմանիայի հետ դաշնակցած կոչվում էր նրա թշնամիների դեմ, սակայն մեր երկրի (Իրանի—Հ. Մ.) նկատմամբ բարացական չէր տրամադրված և երևում էր, որ օսմանյան կառավարությունը ցանկանում էր օգտվել այդ ժամանակ Իրանում տիրող խառը և շփոթ վիճակից (ինչպես հաճախ նկատվել է մեր պատմության մեջ), պղտոր ջրում ձուկ որսալ և տիրել Իրանի արևմտյան վիլայաթների մի մասին։

Բեռլինից Բաղդադ ես ճանապարհվեցի 1915 թ. գարնանը, այսինքն, համաշխարհային պատերազմը սկսվելուց մի քանի ամիս անց։ Ստամբուլ հասնելուն պես ընկա թուրք ոստիկանության թակարդը։ Երկար ու մանրադնին հարցաքննություններից հետո (այսպես, օրինակ, «Եթե մուսուլման ես, ինչու եվրոպական գլխարկ է գլխիդ, իսկ եթե իսկապես իրանցի ես, ինչու թուրքերեն չգիտես») ինձ ձերբակալեցին և տարան հունական մի հյուրանոց, որն ըստ երեվելույթին վերածված էր ոստիկանության բանտի։ Օրեր շարունակ նստած էի մի խցիկում և ոչ ոք չուր շուներ որտեղ եմ ես և ինչ վիճակում եմ գտնվում։ Թուրք ոստիկաններից մեկը ծեծի ու ապտակների սպառնալիքներով ստիպում էր ինձ, որպեսզի ես թուրքերեն խոսեմ։ Վերջապես ազատվելով այդ մղձավանջից մի կերպ հաջողացրի Ստամբուլից Հալեպ տանող գնացքով շարունակել ճանապարհս։ Հետո իմացա, որ Հալեպ տանող այդ երկաթուղին, որ այդ ժամանակ պատկանում էր Թուրքիային, դեռևս ավարտված չէր, որի պատճառով էլ Հալեպ հասնելու համար որոշ տարածություն պետք է գրաստով, կառքով կամ սայլով գնալ։

Գիշեր էր, հասա մի գյուղ։ Այստեղ իջևանեցի մի խղճուկ սրճարանում. առավոտյան պետք է ճանապարհվեի։ Կուշ եկա սրճարանի մի անկյունում և

քանի որ թուրքերեն չգիտեի և գրուցակից էլ չկար, սկսեցի ընթերցել ինձ հետ վերցրած ֆրանսերեն մի վեպ:

Հանկարծ ինձ մոտեցավ մի երիտասարդ: Նա կլինեի քսանհինգ տարեկան: Սիրալիր ու բարեղեմ, սկսեց ֆրանսերեն խոսել ինձ հետ: Պարզվեց, որ նա հայ է: Ուսումը ստացել է Բեյրութի նույն ուսումնական հաստատությունում, որտեղ ես էի սովորել: Սկսվեց ջերմ ու մտերիմ զրույց մեր միջև: Երիտասարդը հեռագրիչ էր աշխատում այդտեղ: Նա ասաց, որ մի քանի ֆրանսերեն գրքեր ուներ, որոնք բոլորն էլ կարդացել էր և խնդրեց ինչ գնով էլ լինի մի քանի ֆրանսերեն գրքեր վաճառել իրեն: Այն գիրքը, որը ընթերցում էի, անմիջապես նվիրեցի նրան որպես հիշատակ և խոստացա առավոտյան ճամպրուկիս մեջ եղած ֆրանսերեն գրքերից էլ տալ իրեն:

Երիտասարդը շնորհակալություն հայտնեց և հրավիրեց ինձ իր սենյակը: Նա անմիջապես ընթերց պատրաստեց, մեծ սիրալիրությամբ հյուրասիրեց ինձ և առաջարկեց գիշերել իր մոտ: Ինձ համար այդ բարիքը անսպասելի էր: Գոհունակությամբ ընդունեցի: Նա ինձ ասաց, որ Հալեպում շատ ընկերներ ու ծանոթներ ունի, որոնք իր հանձնարարությամբ կարող են օգնել ինձ Բաղդադ մեկնելու հարցում: Կերանք, խմեցիներ, զրուցեցիներ, ապա ճրագը հանգրեցինք ու քուն մտանք:

Վաղ առավոտ էր, երբ դրսից լսվող աղմուկ աղաղակից արթնացանք: Հայ երիտասարդը գիշերային զգեստով դուրս եկավ իմանալու պատահածը և անմիջապես վերադարձավ:

Սարսափած աչքերով նա միայն կարողացավ ինձ ասել, որ թուրք ժանդարմները մի խումբ հայերի բերել են տանջամահ անելու և եթե իմանան, որ ինքն էլ հայ է, իրեն էլ կձերբակալեն: Այս ասելուն պես նա երկյուղած աներևութացավ, թողնելով ինձ մենակ իր սենյակում:

Հենց այդտեղից, սկսած այդ պահից ես ականատես եղա մի շարք դժգոհության տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինվորները հայերի գլխին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և որի հետևանքը, ինչպես գիտենք, եղավ միլիոնավոր հայերի ջարդը:

Մեծ դժվարություններով ու արկածներով, որոնք արժե գրի առնել, «Շախտուր» կոչվող մի նավակով, որը իմ վարձատրությամբ արաբները նփրատի ափին պատրաստեցին, ես կարողացա հասնել Բաղդադ: Նփրատի վրայով իմ այդ ճամփորդությունը տևեց 22 օր:

Բաղդադում, մեր մի քանի հայտնի բարեկամների, այդ թվում երջանկահիշատակ էբրահիմ Փուրղավուդի և Հաջի էսմայիլ Ամիրխիզի օգնությամբ հիմնադրեցինք «Բասթախիզ» («Վերածնունդ») թերթը:

Նվ քանի որ անգլիացիները «Քուեթ-էլ-Ամարեի» ուղղությամբ մոտենում էին Բաղդադին, մենք ստիպված տեղափոխվեցինք Քերմանշահ: Սակայն այստեղ էլ տեղեկացանք, որ ռուսական բանակն է մոտենում քաղաքին (ի միջի այլոց անգլիացիք պարտություն կրելով չէին կարողացել մտնել Բաղդադ):

Ընկերների հետ նպատակահարմար գտանք նորից վերադառնալ Բաղդադ, իսկ այնտեղից Ստամբուլի վրայով մեկնել Բեռլին:

Ես իմ ընկերներից ավելի շուտ դուրս եկա Բաղդադից: Իմ այդ ուղևորությունը ընդամենը տևեց տասնվեց ամիս:

Իրանի ժանդարմերիայում ծառայող երկու շվեդացի սպաների, շվեյցարացի մի բժշկի և ոմն Հաջ-Մոհամմադ Բադեր Քաշանի անունով մի իրանցու հետ (որը ողբերգական վախճան ունեցավ), սայլով Բաղդադից Արաբիայի և Հալեպի ճանապարհով ուղևորվեցինք Ստամբուլ:

Հենց առաջին իսկ իջևանից հանդիպեցինք հայերի բազմաթիվ խմբերի, որոնց սպառազեն հեծյալ թուրք ժանդարմները սարսափելի ձևով, որ նույնիսկ կարող է անհավատալի թվալ, քայլելով դեպի կործանում էին ըջում:

Սկզբում դա մեղ վրա շատ ուժեղ տպավորություն թողեց, սակայն հետըզհետե սովորեցինք դրան և նույնիսկ աշխատում էինք շնայել և իսկապես հնարավոր էլ չէր նայել:

Հարյուրավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդեն անդոր էին քաշելու, մտրակի և գենքի ուժով հետիոտն ու անզոր, անխնա քշում էին առաջ: Տղամարդկանց մեջ երիտասարդներ չկալին: Նրանց ուղարկել էին ռազմաճակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին:

Հայ աղջիկները թուրքի կամ արաբի ձեռք շքնկնելու վախից խուզել էին սաղերը: Նրանք զանազան թելերի թուկի ու լաթի կտորներից և նույնիսկ թղթից մի կերպ ոտնամաններ էին սարքել իրենց համար, որոնք իրենց ձեռքով երեխայի օրորոց էին հիշեցնում:

Խմբից ետ մնացողը, ինչ էլ լիներ դրա սլառճառը՝ հոգնածություն, ուժասպառություն կամ բնական պահանջի անհրաժեշտություն, միևնույն էր, տեղն ու տեղը սպանվում էր: Հարազատների լացն ու կոծը անօգուտ էր: Մեր ճանապարհի երկարությամբ հաճախ տեսնում էինք մեռած ու կիսամեռ վիճակում հայ կանանց ու տղամարդկանց:

Հետո լսեցինք, որ այդ կողմերի երիտասարդ բնակիչներից ոմանք, իրենց կրքերին հագուրդ տալու համար, նույնիսկ պղծել էին մեռած ու հոգեվարքի մեջ գտնվող հայ կանանց ու աղջիկների պատիվը:

Եփրատի արևմտյան ափով ձգված մեր ճանապարհին, որը մերթ մոտենում էր գետին, մերթ հեռանում, ամեն օր տեսնում էինք բազմաթիվ հայերի դիակներ, որոնց տանում էր ջրի հոսանքը:

Քանի լույս էր շարունակում էինք ճամփան, իսկ երբ վրա էլ հասնում գիշերը, մեր և ձիերի հանգստի և սնունդի համար գիշերում էինք մի հարմար տեղ: Մի գիշեր, երբ իջևանել էինք ինչ-որ տեղ, որը համեմատաբար շեն վալլ էր, մեզ հաջողվեց մի ուխար գնել: Վաղուց էր, որ մսի համ չէինք ճաշակել: Ուխարը մորթելուց հետո, նրա փորոտիքը լպրծուն կանաչ հեղուկի հետ թափեցինք քիչ հեռու, որտեղ թուրք ժանդարմները մի խումբ հայեր էին բերել:

Երբ մենք զբաղված էինք ուտելիքի պատրաստությամբ, հանկարծ նկատեցինք, թե ինչպես մի խումբ հայեր վրա պրծած, ազահաբար ուտում էին մեր դեն գցած ուխարի փորոտիքը: Դա մի տեսարան էր, որ ես երբեք չեմ կարող մոռանալ:

Մի ուրիշ օր էլ, պատահաբար գիշերեցինք մի վայրում, որտեղ հայերի մի մեծ քարավան օսմանցի ժանդարմների հսկողության տակ մնացել էր այստեղ գիշերելու: Գուռատ ու ոսկրացած դեմքով մի հայ կին մոտեցավ ինձ և տալով ալմաստե ակներով երկու մատանի, ֆրանսերեն լեզվով ասաց. «Ի սեր աստծու, առ այս ալմաստները և փոխարենը սովից մահամերձ երեխաներիս համար մի քիչ ուտելիք տուր ինձ տանեմ»:

Հավատացեք, առաջարկված մատանիները ես չվերցրեցի. բայց ուտելիք տվեցի կնոջը: Ծիշտն ասած, մեր մթերքի պաշարն էլ արդեն սպառվելու վրա էր: Խիստ նեղության մեջ էինք, իսկ Հայկա հասնելու համար գեռ օրերի ճամփա կար առնելու: Մի ծերունի էլ մոտենալով շվեդացի երկու սպաներին (իրանական ժանդարմի համազգեստ հագած) ֆրանսերեն լեզվով ասաց. «Տե՛ր աստված, ե՞րբ պիտի վերջանա այս արյունահեղ պատերազմը: Սպաներից մեկը պատասխանեց. «Մա ոչ թե պատերազմ, այլ բնաջնջում (Extermination) և արմատախիլ ոչնչացում է»: Պարզվեց, որ այդ ծերունին Մտամբուլի բարձրագույն դպրոցներից մեկում մաթեմատիկայի ուսուցիչ է եղել: Նրա երիտասարդ տղաներին տարել էին, թե ո՞ւր, չգիտեմ: Միայն համոզված էր, որ նրանք այլևս կենդանի չեն: Իսկ երկու աղջիկները, որոնց նա ցույց տվեց, գլուխները ածիլած, չոքած հողն էին փորփրում, որպեսզի բուլսի արմատներ գտնեն քաղցը հագեցնելու համար: Նրանք համարյա կիսամեռ վիճակում էին [...]:

Հալելու միջանցինք «Բարոն» կոչվող մի մեծ հյուրանոցում: Հյուրանոցի տերը հայ էր: Նա երկյուղած ու շփոթված մոտեցավ մեզ ու կառկամելով ասաց. «Ջամալ փաշան եկել է Հայկա, տեղավորվել հենց այս հյուրանոցում: Եթե նա իմանա, որ ես հայ եմ, ինձ անպատճառ սպանել կտա և կբռնագրավի հյուրանոցը»:

Հայ հյուրանոցատերը խնդրում էր սեզ, որպեսզի մենք միջնորդենք, այդ գազանարարո մարդու ձեռքից անվնաս մնալու համար: Սակայն մեր միջնորդությունը ոչ մի արդյունք չտվեց: Մի ժամ հետո նրան ձերբակալած տարել էին Բեյրութի կողմերը, որանդ, ինչպես հայտնի է, թուրքերը հսկայական մի սպանդանոց էրս ստեղծել հայերի համար:

Եվ այսպես, ես զարհուրելի օրեր անցկացրի: Օրեր, որոնք ահռելի մղձավանջի պես ծանրացել են հոգուս վրա: Մղձավանջ, որը երբեմն տարբեր անիթներով ճնշում է ողջ էությունս, անհանգստացնում ու տանջում է ինձ:

ВИДНЫЙ ПЕРСИДСКИЙ ПИСАТЕЛЬ О ГЕНОЦИДЕ АРМЯН

Г. О. МОВСИСЯН

Резюме

В 1915 г., в начале первой мировой войны, известный персидский писатель Сеид Мухаммад Али Джамалзаде находился в Берлине. По стечению обстоятельств он должен был ехать в Багдад, куда его путь лежал через Турцию. Во время этого трудного путешествия он стал свидетелем ужасных сцен зверских убийств армян, учиненных жандармами османского правительства, о чем он тогда вел записи. В 1971 г. воспоминания и впечатления писателя были напечатаны в издаваемом в Тегеране журнале «Հուր» («Гур»). Представляемый перевод с персидского на армянский язык печатается с некоторыми сокращениями.